

ՐՕՇԴՕՇՏՐԱՊ



«ՌՈՍԳՈՍՏՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ՌՈՍԳՈՍՏՏՐԱԽ-ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

Խորհրդի կողմից

(27.01.2022 թ. Խորհրդի նիստի

թիվ 01 Արձանագրություն)

ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՅԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Փաստաթղթի կոդ TC750-03-02
Խմբագրություն 07



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2
2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ	5
3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏ	6
4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ	6
5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ	7
6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ	8
7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ	8
8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼՈՒ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՅՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԿՈՂՄԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ	9
9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	12
10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ	16
11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ	21
12. ՎՆԱՍԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՀԱՆՋԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԱՊԱՀՈՎԱԳՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳԱՑԻԱ)	24
13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	25
14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)	25

Սույն ապահովագրության պայմանները մշակված են համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի և համապատասխանում են ՀՀ ԿԲ կողմից տրված ԱՊՈ թիվ 0009 Լիցենզիայի Դժբախտ պատահարներից ապահովագրության դասին:

Սույն ապահովագրության պայմանները հանդիսանում են սույն ապահովագրության պայմանների համաձայն կնքված ապահովագրության պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն ապահովագրության պայմանների հիման վրա կարող են մշակվել ապահովագրական ծրագրեր/պրոդուկտներ (այսուհետ՝ «Օրագիր»):

1. ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրության պայմաններ (այսուհետ՝ Պայմաններ)՝ Դժբախտ պատահարներից ապահովագրության պայմաններ:

Ապահովագրության պայմանագիր՝ (այսուհետ՝ Պայմանագիր/Վկայագիր)՝ ՀՀ օրենսդրության և Պայմանների համաձայն Ապահովադրի և Ապահովագրողի միջև կնքված փաստաթուղթ է, որում



սահմանված են դժբախտ պատահարներից ապահովագրության դասով իրականացվող ապահովագրության պայմանները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ ապահովագրության պայմանագրի/վկայագրի համար նախատեսված պարտադիր այլ պայմանները:

Ապահովագրական գումար՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված դրամական գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է կատարել ապահովագրական հատուցում ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում: Ապահովագրական գումարի չափը որոշվում է կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Ոչ ագրեզատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում յուրաքանչյուր ապահովագրական պատահարի գծով (անկախ դրանց ծավալից և քանակից), որը տեղի է ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում:

Ագրեզատային ապահովագրական գումար՝ գումար, որի սահմաններում Ապահովագրողը պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցում բոլոր ապահովագրական պատահարների գծով, որոնք տեղի են ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում: Ընդ որում, ապահովագրական գումարն ապահովագրական հատուցման վճարումից հետո նվազում է հատուցման գումարի չափով:

Ապահովագրական սակագին՝ ապահովագրավճարի դրույքաչափն է ապահովագրական գումարի նկատմամբ, որը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը և ապահովագրական ռիսկի բնույթը:

Ապահովագրավճար՝ ապահովագրության դիմաց վճար, որն Ապահովադիրը պարտավոր է վճարել Ապահովագրողին՝ համաձայն Պայմանագրում/Վկայագրում սահմանված կարգի և ժամկետների:

Ապահովագրավճարի հերթական մասի վճարում՝ Ապահովագրավճարի տարածակետ վճարում նախատեսող Պայմանագրերի/Վկայագրերի դիմաց մասերով կատարվող վճարումներ, որոնց չափերը և վճարման ժամկետներն Ապահովագրողի կողմից սահմանվում են Պայմանագրում/Վկայագրում:

Չհատուցվող գումար՝ վնասի մաս, որը ենթակա չէ հատուցման Ապահովագրողի կողմից: Այն սահմանվում է Պայմանագրում/Վկայագրում՝ կողմերի փոխհամաձայնությամբ: Չհատուցվող գումարը կարող է լինել պայմանական կամ ոչ պայմանական և սահմանվել ապահովագրական գումարի նկատմամբ ինչպես տոկոսներով, այնպես էլ բացարձակ արժեքով:

Պայմանական չհատուցվող գումար՝ Ապահովագրողը պատասխանատվություն չի կրում չհատուցվող գումարի չափը չգերազանցող վնասի հատուցման համար, սակայն հատուցում է Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա վնասն ամբողջությամբ, եթե այն գերազանցում է չհատուցվող գումարի չափը:

Ոչ պայմանական չհատուցվող գումար՝ փոխհատուցվող վնասը բոլոր դեպքերում նվազեցվում է չհատուցվող գումարի չափով յուրաքանչյուր ապահովագրական պատահարի դեպքում:

Ապահովագրական ռիսկ՝ ենթադրվող իրադարձություն, որի տեղի ունենալու դեպքի համար կնքվում է Պայմանագիր/Վկայագիր:

Ապահովագրական պատահար՝ տեղի ունեցած իրադարձություն, որը նախատեսված է Պայմանագրով/Վկայագրով, որի տեղի ունենալու հիմքում ընկած է պատահականության բնույթը և որի՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում տեղի ունենալու դեպքում առաջացել է Ապահովագրողի՝ Ապահովադիրին (Շահառուին) ապահովագրական հատուցում վճարելու պարտականություն:

Ապահովագրական հատուցում՝ ապահովագրական պատահարի արդյունքում Ապահովագրողի կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված ապահովագրական գումարի սահմաններում Ապահովագրված անձին (Շահառուին) վճարման ենթակա գումար՝ դրամական արտահայտությամբ:



Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակ՝ Պայմանագրին/Վկայագրին կից ներկայացված հավելված, որտեղ նշված են մարմնական վնասվածքի բնույթը և ապահովագրական գումարի նկատմամբ կիրառվող տոկոսները՝ ապահովագրական հատուցման մեծությունը որոշելու համար:

Աշխարհագրական սահմանափակումներ՝ սույն ապահովագրության գործողությունը սահմանափակված է Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարածքով, եթե այլ տարածք նշված չէ Պայմանագրում/Վկայագրում:

Դժբախտ պատահար՝ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված հանկարծակի, չկանխատեսված իրադարձություն, որը տարբերակվում է ըստ առաջացման բնույթի, վայրի և ժամանակի և որը հանգեցրել է Ապահովագրված անձի մարմնական վնասվածքի (այդ թվում՝ այրվածքի, ցրտահարության) և/կամ սուր թունավորման, ինչպես նաև մարմնական վնասվածքի և/կամ սուր թունավորման հետևանքով աշխատունակության ժամանակավոր կամ մշտական կորստի կամ մահվան:

Մարմնական վնասվածք՝ կենդանի հյուսվածքների կառուցվածքի և օրգանների անատոմիական ամբողջականության խախտում, ինչը հանդիսացել է արտաքին միջավայրի ֆիզիկական (բացառությամբ էլեկտրամագնիսային և իոնացնող ճառագայթման) և քիմիական գործոնների միապահ կամ կարճաժամկետ ազդեցության արդյունք, որի ախտորոշումը կատարվել է բժշկական գիտությանը հայտնի ախտանիշների հիման վրա:

SU՝ տրանսպորտային միջոց:

Անձի ոչ սթափ վիճակ՝ վարորդի օրգանիզմում ալկոհոլի որոշակի չափի, ինչպես նաև թմրանյութերի կամ հոգեմետ նյութերի առկայություն, որի դեպքում Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով նախատեսված է պատասխանատվություն:

ՃՏՊ՝ ճանապարհով տրանսպորտային միջոցի շարժման ընթացքում և դրա մասնակցությամբ առաջացած դեպքն է, որի հետևանքով զոհվել կամ վիրավորվել են մարդիկ կամ վնասվել են տրանսպորտային միջոցներ, բեռներ, կառույցներ կամ պատճառվել է այլ նյութական վնաս:

ՃԵԱՍՍ օրենք՝ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին օրենք:

ՃԵԿ՝ ճանապարհային երթևեկության կանոններ:

ՃՈ՝ ճանապարհային ոստիկանություն:

Աշխատունակության ժամանակավոր կորուստ՝ Ապահովագրված անձի դժբախտ պատահարի հետևանքով առաջացած առողջության այնպիսի վիճակ, երբ նա ժամանակավորապես կորցնում է որևէ աշխատանքի նկատմամբ ունակությունները, որոնք վերականգնելի բնույթ ունեն և միաժամանակ ստանում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան բժշկական հաստատությունում: Ժամանակավոր անաշխատունակության փաստը պետք է հավաստվի նման իրավասություն ունեցող բժշկական հաստատության կողմից տրված պաշտոնական փաստաթղթի միջոցով:

Մշտական ընդհանուր անաշխատունակություն՝ Ապահովագրված անձի դժբախտ պատահարի հետևանքով առաջացած առողջության այնպիսի վիճակ, որի դեպքում, բժշկական տեղեկանքների համաձայն, Ապահովագրված անձը մշտական խնամքի (օգնության կամ հսկողության) կարիք ունի և/կամ կարող է իրականացնել աշխատանքային գործունեության միայն առանձին տեսակներ՝ հատուկ կազմակերպված անհատական պայմաններում (հատուկ արտադրամասեր, տնային աշխատանք, աշխատանքային որոշակի հարմարանքների օգտագործում), որոնք պայմանավորված են բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող իրավասու մարմնի որոշմամբ՝ հաշմանդամության 1-ին կամ 2-րդ կամ 3-րդ խմբի կամ «Հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռքբերման սահմանմամբ:

Հաշմանդամություն՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի կողմից սահմանված Ապահովագրված անձի օրգանների և օրգան համակարգերի կայուն խախտումը, որը պայմանավորված է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում ստացված մարմնական



վնասվածքով և/կամ սուր թունավորմամբ, որն ուղեկցվում է կենսագործունեության սահմանափակմամբ, սոցիալական անլիարժեքությամբ և աշխատունակության սահմանափակմամբ:

Միայն բժշկական մանիպուլյացիաներ՝ բուժաշխատողների կողմից թույլ տրված և իրավասու մարմինների կողմից հաստատված շեղումներ բժշկագիտությամբ սահմանված մանիպուլյացիաների իրականացման տեխնիկայից, որոնք առաջացրել են Ապահովագրված անձի առողջության համար բացասական հետևանքներ. գլխուղեղի, ողնուղեղի, ներքին օրգանների վնասում, ոսկրերի կոտրվածք, հոդախախտ, վերք, կտրվածք, այրվածք, ցրտահարություն, էլեկտրահարություն, սեղմում, օրգանի լրիվ կամ մասնակի կորուստ:

Սուր թունավորումներ՝ Ապահովագրված անձի օրգանիզմի կտրուկ զարգացող հիվանդագին փոփոխություններ և պաշտպանիչ ազդանշաններ, որոնք առաջացել են արտաքին միջավայրից օրգանիզմի մեջ հանկարծակի ստացված թունավոր հատկություններ ունեցող քիմիական նյութի միապահ կամ կարճաժամկետ ազդեցության հետևանքով:

Մյրվածք՝ Ապահովագրված անձի օրգանիզմի հյուսվածքների վնասումը, որն առաջացել է բարձր ջերմաստիճանի և/կամ որոշ քիմիական նյութերի և/կամ էլեկտրական հոսանքի և/կամ ճառագայթման հետևանքով:

Առաջնային բժշկական ծախսեր՝ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության տեղի ունենալուց հետո 48 (քառասունութ) ժամվա ընթացքում բժշկական հաստատություն դիմելու դեպքում տվյալ իրադարձության կապակցությամբ հետազոտվելու (լաբորատոր-գործիքային հետազոտություններ) և անհրաժեշտ առաջնային բժշկական օգնություն ստանալու (վիրահատական կամ ոչ վիրահատական բուժում, ֆիքսման միջոցների մետաղական կոնստրուկցիաների, գիպսի, բանդաժի տեղադրում և հանում, այդ բուժման ընթացքում բժշկի կողմից նշանակված դեղորայքի տրամադրում) գծով փաստացի կատարված ծախսերը՝ բացառությամբ հետբուժական շրջանում կատարվող ծախսերի (բացառությամբ մետաղական կոնստրուկցիաների հեռացման գծով կատարվող ծախսերի), այդ թվում՝ հետբուժական շրջանում դինամիկ հսկողության, պահպանողական և վերականգնողական բուժման գծով ծախսերի, ինչպես նաև փաստաթղթորեն հիմնավորված բուժորանապորտային ծախսերը, այդ թվում՝ մոտակա բժշկի մոտ կամ բժշկական հաստատություն շտապ օգնության մեքենայով փոխադրման ծախսերը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐ

2.1. Ապահովագրողը սույն Պայմանների հիման վրա կարող է կնքել ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ:

2.2. **Ապահովագրության սուբյեկտներն են՝** Ապահովագրողը, Ապահովադիրը, Ապահովագրված անձը, Շահառուն:

2.3. **Ապահովագրող՝** «Ռոսգոսստրախ-Արմենիա» Ապահովագրական ՓԲԸ:

2.4. **Ապահովադիրը՝** Ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքած գործունակ ֆիզիկական կամ իրավաբանական անձ, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին, հիմնարկ:

2.5. **Շահառու** է հանդիսանում Ապահովագրված անձը, եթե Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ այլ բան նախատեսված չէ:

2.6. **Ապահովագրված անձ՝** ֆիզիկական անձ, ում տարիքն ապահովագրության պայմանագրի կնքման պահին կազմում է 1-ից 70 տարեկան ներառյալ (եթե ապահովագրության պայմանագրում այլ տարիք նշված չէ), ապահովագրության պայմանագրում նշված է որպես ապահովագրված անձ և ում օգտին կնքված է ապահովագրության պայմանագիրը, եթե ապահովագրության պայմանագրում որպես Շահառու այլ անձ նշված չէ:



2.7. Ապահովադիրներ կարող են հանդիսանալ՝

- ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք, ՀՀ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք գրանցված են և գործում են ՀՀ օրենսդրության համաձայն,
- գործունակ ֆիզիկական անձինք՝ ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ:

3. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ

3.1. Համաձայն Պայմանների՝ Պայմանագրով/Վկայագրով ապահովագրության օբյեկտ են հանդիսանում Ապահովադրի կամ Ապահովագրված անձի գույքային շահերը՝ կապված դժբախտ պատահարի հետևանքով Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու հետ:

3.2. Ապահովագրման ենթակա չեն՝

- 1-ին, 2-րդ, խմբի հաշմանդամները, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող անձինք, մշտական անաշխատունակ անձինք,
- կայուն նյարդային կամ հոգեբանական խանգարումներով և/կամ հիվանդություններով տառապող անձինք,
- անձինք, ովքեր հաշվառված են նյարդահոգեբանական և/կամ նարկոլոգիական և/կամ հակատուբերկուլյոզային դիսպանսերներում,
- ստացիոնար, ամբուլատոր բուժման կամ հետազոտության մեջ գտնվող անձինք (մինչև նրանց լրիվ բուժվելը), եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:
- էպիլեպսիայով, օնկոլոգիական հիվանդություններով, ՁԻԱՀ-ով կամ այլ ինունոդեֆիցիտային հիվանդություններով անձինք,
- անձինք, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում կամ ազատագրկման դատապարտված անձինք,
- առողջական վիճակից ելնելով՝ մշտական խնամքի կարիք ունեցող անձինք,
- զինվորական ծառայություն անցնող անձինք:

3.3. Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին Ապահովադրի տարիքը չի կարող փոքր լինել 18 (տասնութ) տարեկանից:

4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐՆԵՐ

4.1. Պայմաններով ապահովագրական պատահարներ են համարվում հետևյալ իրադարձությունները, որոնք տեղի են ունեցել տվյալ Ապահովագրված անձի գծով Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում՝

4.1.1. մարմնական վնասվածք, որն ուղղակիորեն առաջացել է դժբախտ պատահարի կամ սխալ բժշկական մանիպուլյացիաների հետևանքով, սուր թունավորում քիմիական նյութերով և/կամ կենսաբանական ծագման թույլներով (այդ թվում՝ բոտուլիզմ հիվանդությանը հանգեցնող թույլով), 2-րդ, 3-րդ, 4-րդ աստիճանների թերմիկ և/կամ քիմիական այրվածք,

4.1.2. 1-ին, 2-րդ, 3-րդ խմբի հաշմանդամության, «հաշմանդամ երեխա» կարգավիճակի ձեռք բերումը, որն առաջին անգամ սահմանվել է Ապահովագրված անձին Պայմանների 4.1.1 ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու հետևանքով, Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում: Եթե Ապահովագրված անձին հաշմանդամության սահմանումը տեղի է ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո, այն համարվում է ապահովագրական պատահար, եթե Պայմանների 4.1.1. ենթակետում նշված իրադարձության առաջացման պահից անցել է ոչ ավել, քան տվյալ Ապահովագրված անձի գծով ապահովագրության



Ժամկետին հավասար ժամկետ: Այս ժամկետը, սակայն, չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից:

4.1.3. Ապահովագրված անձի մահը Պայմանների 4.1.1. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու հետևանքով, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում, ինչպես նաև մահը, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում շնչահեղձումից՝ շնչուղիներ օտար մարմին ընկնելու, ջրահեղձման, անաֆիլակտիկ շոկի, մարմնի գերսառեցման հետևանքով: Եթե Ապահովագրված անձի մահը տեղի է ունեցել Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ավարտից հետո, այն համարվում է ապահովագրական պատահար, եթե Պայմանների 4.1.1 ենթակետում նշված իրադարձության առաջացման պահից անցել է ոչ ավել, քան տվյալ Ապահովագրված անձի գծով ապահովագրության ժամկետին հավասար ժամկետ: Այս ժամկետը, սակայն, չի կարող պակաս լինել 3 ամսից և ավել 12 ամսից,

4.1.4. աշխատունակության ժամանակավոր կորուստ Պայմանների 4.1.1. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու հետևանքով, որն առաջացել է Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում,

4.1.5. Պայմանագրով/Վկայագրով նախատեսված լինելու դեպքում ապահովագրական պատահար է հանդիսանում Ապահովագրված անձի մահը ցանկացած իրադարձության տեղի ունենալու հետևանքով:

4.2. Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական պատահար են հանդիսանում սույն Պայմանների 4.1.1-4.1.4 ենթակետերում նշված իրադարձությունները, ինչպես նաև 4.1.5. կետում նշված իրադարձությունը (Պայմանագրով/Վկայագրով նախատեսված լինելու դեպքում), որոնք տեղի են ունեցել սիրողական սպորտով մեկանգամյա զբաղվելու (սիրողական մակարդակի վրա) ժամանակ (օրինակ՝ արձակուրդի ժամանակ կամ հանգստյան օրերին), մասնավորապես՝ սնտուբորդ, սքեյթբորդ, լեռնային դահուկներ, ջրային դահուկներ, առանց ակվալանգ օգտագործելու ստորջրյա նավարկություն, զբոսանք ձիերով, առանց ալպինիստական սարքավորումներ օգտագործելու հետիոտն արշավներ, հեծանիվ քշել (բացառությամբ՝ տրիալ (առանց նստատեղի) հեծանիվներ քշելու կամ արագընթաց վայրէջքի), ինչպես նաև գործունեության/սպորտի այլ տեսակներ, որոնք չի կարելի դիտարկել որպես վտանգավոր, ինչպես նաև չի կարելի վերագրել պրոֆեսիոնալ սպորտին կամ պարբերաբար պարապմունքներին, որոնք ուղղված են սպորտային արդյունքների հասնելուն:

4.3. Ապահովադիրն իրավունք ունի ընտրել ապահովագրական ռիսկը կամ ապահովագրական ռիսկերի համակցությունը Պայմանների 4.1.1.-4.1.5. ենթակետերից: Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել այլ ապահովագրական ռիսկեր:

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ

5.1. Յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարը սահմանվում է Ապահովագրողի կողմից՝ Ապահովադրի հետ համաձայնեցնելով և նշվում է Պայմանագրում/Վկայագրում:

5.2. Ապահովագրական գումարն ագրեգատային է, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

5.3. Ապահովագրական գումարը կարող է սահմանված լինել տվյալ Ապահովագրված անձի համար ընտրված բոլոր ապահովագրական ռիսկերի գծով ընդհանուր գումարի ձևով կամ այդ ռիսկերից յուրաքանչյուրի գծով առանձին սահմանված գումարների ձևով, ինչը պետք է նշված լինի Պայմանագրում/Վկայագրում:

5.4. Մի քանի անձանց օգտին կնքված Պայմանագրով/Վկայագրով յուրաքանչյուր Ապահովագրված անձի համար ապահովագրական գումարի չափը (անհրաժեշտության դեպքում՝ յուրաքանչյուր ռիսկի գծով առանձին) կարող է նշվել Ապահովագրված անձանց ցուցակում: Ապահովագրված անձանց ցուցակին կից կարող է ներկայացվել ապահովագրության դիմում-հարցաթերթիկը, որը, առկայության



դեպքում, հանդիսանում է Պայմանագրի/Վկայագրի բաղկացուցիչ և անբաժանելի մասը: Ապահովագրված անձանց ցուցակի և ապահովագրության դիմում-հարցաթերթիկի ձևը տիպային է, սակայն Ապահովագրողն իրեն իրավունք է վերապահում դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարել, ինչպես նաև այլ ձևի փաստաթղթեր թողարկել՝ տվյալ Պայմանագրի/Վկայագրի պայմանների և ՀՀ գործող օրենսդրության համաձայն:

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ

6.1. Պայմանագիրը/Վկայագիրը կնքվում է մեկ օրացուցային տարի ժամկետով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ: Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի սկիզբը և ավարտը նշվում են Պայմանագրում/Վկայագրում:

6.2. Պայմանագիրը/Վկայագիրն ուժի մեջ է մտնում՝ առաջին անգամ Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու դեպքում՝ Պայմանագիրը/Վկայագիրը կնքելու օրվան հաջորդող 7-րդ օրվա ժամը 00:00-ից՝ կանխիկ ձևով ապահովագրավճարը միանվագ վճարելու կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցելու պայմանով, իսկ Պայմանագիրը/Վկայագիրը վերակնքելու դեպքում՝ նախորդ Պայմանագրի/Վկայագրի ավարտի օրվան հաջորդող օրվա ժամը 00:00-ից՝ պայմանով, որ ապահովագրավճարը վճարվել է կանխիկ ձևով կամ մուտք է եղել Ապահովագրողի հաշվարկային հաշվին մինչև նախորդ Պայմանագրի/Վկայագրի ժամկետի ավարտը, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

6.3. Պայմանագրի/Վկայագրի գործողությունն ավարտվում է Պայմանագրում/Վկայագրում որպես ապահովագրության գործողության ավարտի ամսաթիվ նշված ամսաթվի ժամը 23:59-ին, եթե Պայմանագրով/Վկայագրով կամ այլ հանգամանքներով, որոնց տեղի ունենալու դեպքում նախատեսված է ապահովագրության ժամկետի ավարտի ամսաթվից շուտ Պայմանագրի/Վկայագրի դադարեցում, այլ բան նախատեսված չէ:

7. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՍԱԿԱԳԻՆ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

7.1. Կախված Ապահովագրի կողմից ընտրված ռիսկերից՝ ապահովագրական սակագնի չափը սահմանվում է ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսադրույքով՝ տարեկան բազային տոկոսադրույքի հիման վրա:

7.2. Ապահովագրողն իրավունք ունի բազային տոկոսադրույքների նկատմամբ կիրառել կարգավորիչ գործակիցներ (աճեցնող և/կամ նվազեցնող)՝ կախված Ապահովագրողի ստանձնած պատասխանատվության ծավալից, Ապահովագրված անձի տարիքից, սեռից, աշխատանքի բնույթից, առողջական վիճակից, կենցաղային պայմաններից, ապահովագրության գործողության ժամկետից և այլ հանգամանքներից, որոնք ազդում են ռիսկի աստիճանի վրա:

7.3. Ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) ենթակա է վճարման Ապահովագրի կողմից՝ ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

7.4. Ապահովագրավճարը վճարվում է միանվագ կամ տարաժամկետ՝ կողմերի համաձայնությամբ՝ մի քանի վճարումներով՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված կարգով և ժամկետներում:

7.5. Ապահովագրի կարող է ապահովագրավճարը վճարել կանխիկ դրամով Ապահովագրողի դրամարկղ, Ապահովագրողի իրավասու անձին կամ անկանխիկ՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին փոխանցում կատարելով: Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղ կամ Ապահովագրողի իրավասու ներկայացուցչին ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման օրը կամ ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) վճարման՝ Ապահովագրողի հաշվարկային հաշվին մուտք լինելու օրը:



7.6. Ապահովագրավճարի վճարման կարգը և ժամկետները սահմանվում են Պայմանագրում/Վկայագրում:

7.7. Ապահովագրավճարը կարող է վճարվել Ապահովադրից տարբեր անձի կողմից: Ընդ որում, տվյալ անձը Պայմանագրի/Վկայագրի գծով պարտականություններ չի ստանձնում և իրավունքներ ձեռք չի բերում:

7.8. ՀՀ դրամին համարժեք արտարժույթով ապահովագրության դեպքում ապահովագրավճարը վճարվում է ՀՀ դրամով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ Պայմանագրի/Վկայագրի կնքելու օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքով:

7.9. Ապահովագրողի կողմից ապահովագրական հատուցում վճարելիս, Ապահովագրողն իրավունք ունի ապահովագրական հատուցման գումարից հաշվանցել տվյալ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված և վճարման ենթակա ամբողջ ապահովագրավճարը կամ դրա չվճարված մասն ամբողջությամբ՝ անկախ ապահովագրավճարի հերթական վճարման համար Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետից:

8. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԿՆՔԵԼՈՒ, ԴՐԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԱՅՆ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԿՈՂՄԵՐԻ ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԸ

8.1. Սույն Պայմանների հիման վրա կնքված Պայմանագրի/Վկայագրի համաձայն Ապահովագրողը պարտավորվում է Պայմանագրում/Վկայագրում սահմանված ժամկետներում և կարգով ապահովագրավճարը վճարելու դիմաց, ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում Ապահովադրին (Ապահովագրված անձին, Շահառուին) վճարել ապահովագրական հատուցում՝ Պայմանագրում/Վկայագրում սահմանված ապահովագրական գումարի սահմաններում՝ Պայմանագրով/Վկայագրով սահմանված կարգով և պայմաններով:

8.2. Պայմանագրի/Վկայագրի կնքման համար հիմք է հանդիսանում Ապահովադրի կողմից Ապահովագրողին ներկայացված Պայմանագրի/Վկայագրի կնքման մասին գրավոր կամ բանավոր դիմումը: Ապահովադրի գրավոր դիմումը կարող է ներկայացվել Ապահովագրողի կողմից սահմանված ձևի դիմում-հարցաթերթիկը լրացնելով, կամ ազատ գրավոր ձևով:

8.3. Պայմանագրի/Վկայագրի կնքվում է գրավոր՝ Ապահովագրողի կողմից սահմանված ձևով Պայմանագրի/Վկայագրի տրամադրմամբ:

8.4. Պայմանագրի/Վկայագրի ձևը տիպային է, սակայն Ապահովագրողն իրեն իրավունք է վերապահում դրանում փոփոխություններ և լրացումներ կատարել, ինչպես նաև այլ ձևի Պայմանագրի/Վկայագրի թողարկել՝ համաձայն տվյալ Պայմանագրի/Վկայագրի պայմանների և ՀՀ գործող օրենսդրության:

8.5. Պայմանագրի/Վկայագրի գործողությունը դադարում է մինչև Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի, որով այն կնքվել էր, ավարտի ամսաթիվը հետևյալ դեպքերում՝

8.5.1. Ապահովագրողի կողմից Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտականություններն ամբողջ ծավալով կատարելու դեպքում՝ Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի ամբողջ չափով ապահովագրական հատուցում իրականացնելու դեպքում,

8.5.2. Ապահովագրողի՝ որպես իրավաբանական անձի, լուծարման կամ վերջինիս լիցենզիան ուժը կորցնելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

8.5.3. ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում, այդ թվում՝ դատարանի որոշմամբ:

8.6. Պայմանագրի/Վկայագրի կարող է լուծվել հետևյալ դեպքերում.

- 8.6.1.** կողմերի համաձայնությամբ,
- 8.6.2.** Ապահովադրի նախաձեռնությամբ,



- 8.6.3. Ապահովադրի կողմից Պայմանագրի/Վկայագրի էական խախտման համար Ապահովագրողի նախաձեռնությամբ,
- 8.6.4. Ապահովագրողի կողմից Պայմանագրի/Վկայագրի էական խախտման համար Ապահովադրի նախաձեռնությամբ,
- 8.6.5. Պայմանագրով/Վկայագրով և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 8.7. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Պայմանագրի/Վկայագրի դրույթները կարող են փոփոխվել և/կամ լրացվել կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով: Պայմանագրի/Վկայագրի ցանկացած փոփոխություններ և լրացումներ համարվում են կատարված, եթե դրանք ձևակերպված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից:
- 8.8. Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մտադրության մասին կողմերը պարտավոր են ծանուցել միմյանց ոչ պակաս, քան Պայմանագրի/Վկայագրի վաղաժամկետ լուծման ենթադրվող ամսաթվից 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ, եթե Պայմանագրով/Վկայագրով ավելի երկար ժամկետ նախատեսված չէ:
- 8.9. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք ունի առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը/Վկայագիրը դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (այսուհետ՝ մտածելու ժամանակ):
- 8.10. Մտածելու ժամանակը չի կիրառվում հետևյալ դեպքերում.
- 8.10.1. Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետը և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված ապահովագրության գործողության ժամկետը չի գերազանցում 1 (մեկ) ամիսը,
- 8.10.2. Պայմանագրի/Վկայագրի կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում ֆիզիկական անձ Ապահովադիրը դիմել է ապահովագրական հատուցում ստանալու պահանջով:
- 8.11. Պայմանագիրը/Վկայագիրը սույն Պայմանների 8.9. կետի համաձայն լուծելու դեպքում Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է լուծված ֆիզիկական անձ Ապահովադրի կողմից Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին Ապահովագրողին ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:
- 8.12. Պայմանների 8.6. կետի 8.6.2. և 8.6.4. ենթակետերով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովագրողը վերադարձնում է վճարված ապահովագրավճարի մի մասն Ապահովադրին՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ.

ՎԱ = ԸԱ*2Ժ/ԳԺ

- ՎԱ**՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,
- ԸԱ**՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Պայմանագրի/Վկայագրի,
- 2Ժ**՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության չլրացած ժամկետ,
- ԳԺ**՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետ:

8.13. Պայմանների 8.9. կետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովագրողը վերադարձնում է վճարված ապահովագրավճարի մի մասն Ապահովադրին՝ մասհանելով տվյալ Ապահովագրված անձի գծով Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը (բացառությամբ՝ ապահովագրական հատուցումների) 20 (քսան) տոկոսի չափով՝ համաձայն հետևյալ բանաձևի, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ.

ՎԱ = ԸԱ*2Ժ/ԳԺ – ԸԱ*0.2

- ՎԱ**՝ վերադարձման ենթակա ապահովագրավճար,



- ԸԱ՝ ընդամենը ապահովագրավճար՝ համաձայն Պայմանագրի/Վկայագրի,
- ՉԺ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության չլրացած ժամկետ,
- ԳԺ՝ Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետ:

8.14. Ապահովագրողի պարտականությունների կատարման հետ կապված ծախսերը (բացառությամբ՝ ապահովագրական հատուցումների) 20 (քսան) տոկոսի չափով վերադարձման ենթակա ապահովագրավճարից կարող են չնվազեցվել, եթե.

8.14.1. Պայմանագիրը/Վկայագիրն Ապահովադրի նախաձեռնությամբ Ապահովագրված անձանցից մեկի գծով դադարեցնելու և մեկ այլ Ապահովագրված անձով փոխարինելու դեպքում,

8.14.2. Պայմանագիրը/Վկայագիրն Ապահովադրի նախաձեռնությամբ Ապահովագրված անձանցից մեկի գծով դադարեցնելու դեպքում, եթե դադարեցման պահին Ապահովադիրն ունի Ապահովագրողի հետ գործող նմանատիպ (դադարեցման ենթակա Պայմանագրի/Վկայագրի հետ միևնույն ապահովագրության դասով) ապահովագրության պայմանագրեր/վկայագրեր 15 և ավելի Ապահովագրված անձանց գծով:

8.15. Պայմանների 8.6. կետի 8.6.3. ենթակետով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի կողմից Ապահովագրողին վճարված ապահովագրավճարը վերադարձման ենթակա չէ, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

8.16. Այն դեպքում, երբ Ապահովադրին վերադարձման ենթակա գումարի հաշվարկի արդյունքում ստացվում է բացասական թվային գումար, ապա վերադարձման ենթակա գումարը սահմանվում է հավասար զրոյին (ապահովագրավճարի վերադարձ չի իրականացվում):

8.17. 8.6.1. և 8.6.2. ենթակետերով սահմանված պայմաններով Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու դեպքում Ապահովադրի և Ապահովագրողի փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել Պայմանագրի/Վկայագրի լուծման գծով վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկի այլ սկզբունքներ:

8.18. Կողմերը կարող են ՀՀ գործող օրենսդրությամբ և Պայմաններով նախատեսված բոլոր ծանուցումները Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով նախատեսված անձանց ուղարկել.

- գրավոր ծանուցումն առձեռն հանձնելու միջոցով՝ ստացման մասին ստորագրությամբ, կամ
- գրավոր ծանուցումն Ապահովագրողի, Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) կողմից Պայմանագրում/Վկայագրում նշված փոստային հասցեին պատվիրված նամակով՝ հետպատասխան տեղեկացմամբ, ուղարկելու միջոցով, կամ
- գրավոր ծանուցումն Ապահովագրողի, Ապահովադրի/Ապահովագրված անձի՝ Պայմանագրում/Վկայագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

8.19. Ապահովագրողը, Ապահովադիրը/ապահովագրված անձը/ միմյանց միջև փաստաթղթերի (դիմումներ, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցումներ եւ այլն) կամ այլ տեղեկատվության փոխանակումը կարող են իրականացնել էլ.փոստի միջոցով՝ Պայմանագրում/Վկայագրում նշված կամ միմյանց գրավոր տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեներից, և այդ կարգով ուղարկված և/կամ ստացված դիմումները, ծանուցումները և Պայմանագրի/Վկայագրի հետ կապված ամբողջ նամակագրությունը համարվում է պատշաճ տեղեկատվություն, դիմում, այդ թվում՝ հայտային դիմում, ծանուցում: Պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեներից փաստաթղթերի կամ տեղեկատվության ուղարկումը/ստացումը համարվում է պատշաճ ծանուցում:

8.20. Սույն Պայմաններով և ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված կարգով բոլոր ծանուցումները համարվում են պատշաճ ուղարկված և/կամ ստացված Ապահովագրողի, Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) համար, և վերջինների կողմից որոշակի գործողություններ կատարելու համար սահմանված ժամկետները ծանուցող անձի կողմից սկսվում են հաշվարկվել՝



- Էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկվելու դեպքում՝ ծանուցումն ուղարկելու օրվան հաջորդող օրվանից,
- ծանուցումը ստորագրությամբ առձեռն հանձնվելու դեպքում՝ հանձնելու օրվան հաջորդող օրվանից,
- պատվիրված նամակով ուղարկվելու դեպքում՝ ծանուցման ստացման կամ որևէ հիմքով նամակը փոստի ծառայության կողմից հետ վերադարձման պահին հաջորդող օրվանից:

9. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

9.1. Ապահովադիրն իրավունք ունի՝

9.1.1. ստանալ տեղեկատվություն Ապահովագրողի մասին՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ծավալով, պայմաններով և կարգով,

9.1.2. Ապահովագրողից ստանալ խորհրդատվություն Պայմանների, Ծրագրի և Պայմանագրի/Վկայագրի պայմանների գծով,

9.1.3. ստանալ Պայմանները, Ծրագիրը (առկայության դեպքում), որոնց հիման վրա կնքվում է Պայմանագիրը/Վկայագիրը,

9.1.4. պահանջել Ապահովագրողից վճարել Շահառուին ապահովագրական հատուցում պատահարն ապահովագրական ճանաչվելու դեպքում՝ Պայմանագրի/Վկայագրի պայմաններով սահմանված ծավալով և կարգով,

9.1.5. սույն Պայմանների և ՀՀ օրենսդրության համաձայն վաղաժամկետ լուծել Պայմանագիրը/Վկայագիրը,

9.1.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխարինել Պայմանագրում/Վկայագրում նշված Շահառուին մեկ այլ անձով՝ գրավոր տեղեկացնելով այդ մասին Ապահովագրողին, սակայն Շահառուն չի կարող փոխարինվել այլ անձով, եթե Ապահովագրողին պահանջ է ներկայացրել ապահովագրական հատուցում ստանալու համար, կամ երբ Շահառուն արդեն կատարել է Պայմանագրի/Վկայագրի գծով իր պարտականություններից որևէ մեկը,

9.1.7. Պայմանագիրը/Վկայագիրը կորցնելու դեպքում, համաձայն իր գրավոր դիմումի, ստանալ դրա կրկնօրինակը՝ համապատասխան գրառմամբ: Կրկնօրինակի տրամադրումից հետո արդեն իսկ կորած Պայմանագիրը/Վկայագիրը համարվում է ուժը կորցրած և դրանով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները համարվում են ուժը կորցրած:

9.2. Ապահովադիրը պարտավոր է՝

9.2.1. Ապահովագրողին հայտնել ստույգ տեղեկատվություն Ապահովագրված անձի մասին, ներառյալ՝ բժշկական բնույթի տեղեկությունները և տրամադրել բժշկական փաստաթղթեր, եթե դրանք անհրաժեշտ են ապահովագրական ռիսկը գնահատելու համար,

9.2.2. վճարել ապահովագրավճարն (ապահովագրավճարի հերթական մասն) Ապահովագրողին Պայմանագրով/Վկայագրով նախատեսված չափերով, կարգով և ժամկետներում,

9.2.3. Պայմանագիր/Վկայագիր կնքելիս Ապահովագրողին տեղեկացնել իրեն հայտնի բոլոր հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն ապահովագրական պատահարի տեղի ունենալու հավանականությունը որոշելու համար, եթե այդ հանգամանքները հայտնի չեն Ապահովագրողին և նշված չեն Ապահովադրի գրավոր դիմումի մեջ,

9.2.4. Պայմանագրի/Վկայագրի գործողության ժամկետի ընթացքում անհապաղ հայտնել Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը կնքելիս նրան հայտնած հանգամանքների՝ իրեն հայտնի դարձած փոփոխությունների մասին, եթե այդ փոփոխությունները կարող են էապես ազդել ապահովագրական ռիսկի մեծացման վրա: Ապահովագրական ռիսկի փոփոխության մասին հաղորդագրությունը կարող է ուղարկվել Ապահովագրողին ցանկացած հասանելի ձևով՝ հետագա գրավոր հաստատումով՝ 10 (տասն) օրացուցային օրվա ընթացքում,



9.2.5. հասցեների և/կամ վավերապայմանների փոփոխության դեպքում նախապես տեղեկացնել Ապահովագրողին այդ մասին: Եթե Ապահովադիրը նախապես չի տեղեկացրել իր հասցեի կամ վավերապայմանների փոփոխության մասին, ապա Ապահովագրողի կողմից նախկին հասցեով ուղարկված բոլոր ծանուցումները և տեղեկացումները կհամարվեն պատշաճ ուղարկված,

9.2.6. Ապահովագրված անձին (Շահառուին) տրամադրել Պայմանների, Ծրագրի դրույթների, Պայմանագրի/Վկայագրի պայմանների մասին տեղեկություններ, ինչպես նաև Ապահովագրված անձին (Շահառուին) հայտնել նրա պարտավորությունները,

9.2.7. կատարել ՀՀ օրենսդրությամբ, Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված այլ պարտավորությունները:

9.3. Ապահովագրված անձը (Շահառուն) պարտավոր է՝

9.3.1. սույն Պայմանների 4.1. կետի 4.1.1.-ից 4.1.4. ենթակետերով նախատեսված ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում անհապաղ, սակայն ոչ ուշ քան 48 (քառասունութ) ժամվա ընթացքում այդ մասին հայտնել Ապահովագրողին կամ նրա ներկայացուցչին Պայմանագրում/Վկայագրում նշված հեռախոսահամարով: Բացառություն են կազմում այն դեպքերը, երբ Ապահովագրված անձը (Շահառուն) ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության հետևանքով հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ տեղեկացնելը, ինչպես նաև Ապահովագրված անձի (Շահառուի) մահը: Նշված տեղեկացման պարտականությունն անհնարին դարձնող հանգամանքների վերացման դեպքում Ապահովադիրը պարտավոր է տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին անհապաղ հայտնել Ապահովագրողին: Ապահովագրված անձը (Շահառուն) կրում է ապահովագրական պատահարի մասին սահմանված ժամկետում տեղեկացնելու անհնարինության ապացուցման պարտականությունը,

9.3.2. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում այդ մասին անմիջապես հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն), սակայն Պայմանների 10.1. կետի գ) ենթակետով նախատեսված դեպքերում Ապահովադիրը պարտավոր է դիմել Ոստիկանությանը Ապահովագրողի կողմից նմանատիպ պահանջ ներկայացվելուց հետո,

9.3.3. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն տեղի ունենալու դեպքում այդ մասին Ապահովագրողին տեղեկացնելուց հետո ոչ ուշ քան 45 (քառասունհինգ) օրվա ընթացքում ներկայանալ Ապահովագրողի գրասենյակ, լրացնել Ապահովագրողի կողմից հաստատված ձևով գրավոր հայտային դիմում՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստի մասին նրան հայտնի իրադարձության բոլոր մանրամասնությունների շարադրմամբ և ներկայացնել համապատասխան փաստաթղթերն՝ ապահովագրական հատուցում ստանալու համար: Գրավոր դիմում կարող է ներկայացվել նաև Ապահովագրված անձից (Շահառուից) տարբեր անձի կողմից: Գրավոր դիմումի ձևն Ապահովագրված անձը կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից, որի հասցեն նշված է Պայմանագրում/Վկայագրում: Եթե Ապահովագրված անձը դժբախտ պատահարի արդյունքում հայտնվել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողի գրասենյակ ներկայանալը, ապա նա պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովագրված անձը (Շահառուն) կրում է ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում Ապահովագրողի գրասենյակ ներկայանալու անհնարինության ապացուցման պարտականությունը: Ապահովագրական հատուցում ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու ժամկետը համարվում է երկարաձգված ՀՀ օրենսդրությամբ նախատեսված առավելագույն ժամկետով, եթե տվյալ փաստաթղթի ներկայացումն անհնար է դարձել իրավասու մարմինների կողմից դեռևս տրամադրված



չլինելու/Ապահովագրված անձի մահվան դեպքում նրա ժառանգների կողմից Պայմանագրի/Վկայագրի գոյության վերաբերյալ ուշ տեղեկանալու հետևանքով,

9.3.4. ներկայացնել համապատասխան փաստաթղթերը՝ ապահովագրական հատուցում ստանալու համար,

9.3.5. ապահովագրական պատահարից հետո Ապահովագրողի կամ իրավասու պետական մարմնի պահանջով, սահմանված կարգին համապատասխան, անցնել զննություն՝ սթափության վիճակը որոշելու նպատակով,

9.3.6. կատարել Պայմաններով և Պայմանագրով/Վկայագրով սահմանված պարտավորությունները,

9.3.7. այն դեպքում, երբ Ապահովագրված անձը հանդիսանում է անչափահաս, նրա պարտականությունները կրում է վերջինիս օրինական ներկայացուցիչը:

9.4. Ապահովագրողն իրավունք ունի՝

9.4.1. նախքան Պայմանագրի/Վկայագրի կնքումը հնարավոր Ապահովագրից կամ Ապահովագրված անձից պահանջել տեղեկություններ, այդ թվում՝ բժշկական բնույթի, և պահանջել անցկացնել հնարավոր Ապահովագրված անձի բժշկական հետազոտում՝ նրա առողջական վիճակը գնահատելու համար,

9.4.2. անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ տեղեկություններ Ապահովագրից (Ապահովագրված անձից, Շահառուից) կամ համապատասխան իրավասու մարմիններից,

9.4.3. ստուգել Ապահովագրի, Ապահովագրված անձի, Շահառուի կողմից հայտնած տեղեկատվությունն, ինչպես նաև Ապահովագրի կողմից Պայմանագրից/Վկայագրից ծագող իր պարտականությունների կատարումը,

9.4.4. կիրառել իր կողմից մշակված ապահովագրական սակագները և դրանց կարգավորիչ գործակիցները՝ ապահովագրավճարի չափը սահմանելու համար՝ հաշվի առնելով ապահովագրության օբյեկտը, ապահովագրության պայմանները և ապահովագրական ռիսկի աստիճանը,

9.4.5. հետաձգել ապահովագրական հատուցման տրամադրումն Ապահովագրված անձի կյանքին կամ առողջությանը վնաս պատճառելու փաստով քրեական գործ հարուցվելու դեպքում՝ մինչև իրավասու մարմինների կողմից համապատասխան որոշման ընդունումը, ինչպես նաև դժբախտ պատահարի պատճառի մեջ կասկածի դեպքում՝ մինչև տվյալ փաստի հաստատումը,

9.4.6. հետաձգել ապահովագրական հատուցման կատարումը մինչև հիմնական/լրացուցիչ Ապահովագրված անձի հետ տեղի ունեցած ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության մասին ամբողջական տեղեկատվության, ինչպես նաև այն հաստատող փաստաթղթերի ստացումը,

9.4.7. ապահովագրական ռիսկի ավելացմանը հանգեցնող հանգամանքների ի հայտ գալու դեպքում Ապահովագրից պահանջելու Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխություն և/կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարում: Եթե Ապահովագրիին առարկում է Պայմանագրի/Վկայագրի պայմանների փոփոխությանը կամ լրացուցիչ ապահովագրավճարի վճարմանը, Ապահովագրողն իրավունք ունի պահանջելու Պայմանագրի/Վկայագրի լուծում,

9.4.8. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության փաստով կատարել դրա հանգամանքների ստուգում, անհրաժեշտ փաստաթղթերն ստանալուց հետո ստուգել դրանց հավաստիությունը,

9.4.9. իրականացնել Պայմանագրի/Վկայագրի կնքելիս Ապահովագրի կողմից հայտնած անձնական տվյալների (անձնական տվյալների մասին օրենսդրության համաձայն) մշակում (ներառյալ դրանց տարածումը, օգտագործումը, պահպանումը, ինչպես նաև երրորդ անձանց տրամադրումը) ապահովագրական գործունեություն իրականացնելու, ապահովագրական պրոդուկտների կամ գործընկերների պրոդուկտների մասին տեղեկություններ տրամադրելու նպատակով, այդ թվում՝ կապի միջոցների օգտագործմամբ Ապահովագրի հետ ուղղակի կապ հաստատելու միջոցով, օրենսդրությամբ չարգելված այլ նպատակներով, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,



9.4.10. սեփական հայեցողությամբ կրճատել Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի, ժառանգների) կողմից պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկը (օրինակ՝ ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը, պատճառը կամ հանգամանքները, վնասի չափը հաստատող և այլն),

9.4.11. ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով՝ անհրաժեշտության դեպքում ապահովագրական պատահար տեղի ունենալու հանգամանքների վերաբերյալ հարցում կատարել համապատասխան իրավասու մարմիններին, ինչպես նաև Ապահովագրված անձից, նրա Շահառուից կամ ժառանգից պահանջել ապահովագրական պատահարի տեղի ունենալու փաստը և պատճառը հաստատող լրացուցիչ տեղեկությունների և փաստաթղթերի տրամադրում, բացի այդ ինքնուրույն/անկախ փորձագետի միջոցով անցկացնել ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն՝ պարզելու համար ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձության առաջացման պատճառները և հանգամանքները,

9.4.12. պահանջել ապահովագրական պատահարի կապակցությամբ իր հաշվին անցկացնել դատաբժշկական փորձաքննություն՝ ապահովագրական հատուցման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով,

9.4.13. իրականացնել այլ գործողություններ՝ Պայմանագրի/Վկայագրի գծով իր պարտականությունները սույն Պայմանների համաձայն կատարելու նպատակով,

9.4.14. ապահովագրական պատահարից հետո պահանջել Ապահովագրված անձից անցնելու գնություն՝ սահմանված կարգին համապատասխան սթափության վիճակը պարզելու նպատակով:

9.5. Ապահովագրողը պարտավոր է՝

9.5.1. Ապահովադրին ծանոթացնել ապահովագրության պայմաններին, տալ պարզաբանումներ Պայմանագրի/Վկայագրի պայմաններին վերաբերող հարցերի գծով, Պայմանագրի/Վկայագրի կնքումից հետո Ապահովադրին փոխանցել Պայմանագրի/Վկայագրի նրա օրինակը,

9.5.2. Ապահովադրին տրամադրել սահմանված ձևի անդորրագիր, եթե ապահովագրավճարը (ապահովագրավճարի հերթական մասը) վճարվել է կանխիկ,

9.5.3. հայտի կարգավորման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ստանալուց հետո 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում ընդունել որոշում՝ ապահովագրական հատուցումը վճարելու կամ ապահովագրական հատուցումը մերժելու (նվազեցնելու) վերաբերյալ,

9.5.4. ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում, համապատասխան որոշումն ընդունելու օրվանից 15 (տասնհինգ) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել ապահովագրական հատուցում: Ապահովագրական հատուցման վճարման ամսաթիվ է համարվում Ապահովագրողի դրամարկղից կանխիկ դրամի վճարման օրը կամ Ապահովագրողի հաշվարկային հաշվից միջոցների դուրսգրման օրը,

9.5.5. Պայմանագրով/Վկայագրով և սույն Պայմաններով սահմանված ժամկետներում և պայմաններով իրականացնել ապահովագրական հատուցման գումարի վճարում,

9.5.6. ապահովագրական հատուցումը մերժելու կամ նվազեցնելու մասին որոշում կայացնելու դեպքում՝ կայացված պատճառաբանված որոշումը պատվիրված նամակով 5 (հինգ) օրացուցային օրվա ընթացքում առաքել Ապահովադրին (Շահառուին)՝ նրա մշտական բնակության վայրի հասցեով,

9.5.7. ապահովել Ապահովադրից (Շահառուից, Ապահովագրված անձանցից) ստացված անձնական տվյալների գաղտնիությունը և անվտանգությունը դրանց մշակման ժամանակ:

9.6. Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում իրավաբանական անձ հանդիսացող Ապահովադրի վերակազմակերպման դեպքում նրա իրավունքներն ու պարտականություններն Ապահովագրողի համաձայնությամբ անցնում են Ապահովադրի իրավահաջորդին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:



9.7. Հօգուտ այլ անձի Պայմանագիր/Վկայագիր կնքած ֆիզիկական անձ հանդիսացող Ապահովադրի մահվան դեպքում Պայմանագրով/Վկայագրով սահմանված վերջինիս իրավունքներն ու պարտականություններն անցնում են այդ անձին՝ նրա համաձայնությամբ: Այդ անձի կողմից Պայմանագրով/Վկայագրով պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրա իրավունքներն ու պարտականությունները կարող են անցնել այն անձանց, ովքեր, համաձայն ՀՀ գործող օրենսդրության, իրականացնում են Ապահովագրված անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պարտականությունները:

9.8. Եթե Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում Ապահովադիրը դատարանով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, Ապահովադրի իրավունքները և պարտականություններն անցնում են նրա խնամակալին կամ հոգաբարձուին:

9.9. Պայմանագրով/Վկայագրով Ապահովադրի (Ապահովագրված անձի, Շահառուի) իրավունքներն ու պարտականությունները չեն կարող փոխանցվել այլ անձի առանց Ապահովագրողի գրավոր համաձայնության:

9.10. Պայմանագրով/Վկայագրով կարող են նախատեսված լինել նաև կողմերի այլ իրավունքներ և պարտականություններ:

10. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐԻ ՆՇԱՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ ՏԵՂԻ ՌԻՆԵՍԱԼՈՒ ԴԵՊԶՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀՍՏՈՒՑՄԱՆ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1. Պատահարն ապահովագրական ճանաչելու և հատուցում ստանալու համար Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն, Ժառանգները) պետք է Ապահովագրողին ներկայացնի՝
ա) գրավոր հայտային դիմում, որտեղ նշված կլինեն տվյալ իրադարձության առաջացման հանգամանքները, ինչպես նաև այն բանկային հաշվեհամարը, որին կփոխանցվի ապահովագրական հատուցումը: Դիմումի ձևն Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն, Ժառանգները) կարող է ստանալ Ապահովագրողի գրասենյակից,

բ) դիմողի՝ Ապահովագրված անձի (Շահառուի, Ժառանգների), անձնագրի կամ նույնականացման քարտի, Ապահովագրողի պահանջով նաև ծննդյան վկայականի կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված անձը հաստատող այլ փաստաթղթի բնօրինակը,

գ) ապահովագրական հատուցումը ստացողի անձնագիրը և պատշաճ վավերացված լիազորագիրը այն դեպքերում, եթե ապահովագրական հատուցումը ստանալու է Ապահովագրված անձի կողմից լիազորված անձը,

դ) լրացուցիչ Ապահովագրված անձի գծով ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում իրավասու մարմնի կողմից տրված փաստաթուղթը, որը վկայում է լրացուցիչ Ապահովագրված անձի՝ հիմնական Ապահովագրված անձի ընտանիքի անդամ լինելու փաստի մասին,

ե) գլխի վնասվածք կամ ուղեղի ցնցում, 3-րդ կամ 4-րդ աստիճանի այրվածք, կտրող-ծակող գործիքով պատճառված վերք, թափանցող վերք կամ հրազենային վնասվածք, պոլիտրավմա, սուր թունավորում, բռնի կամ հակաօրինական գործողությունների, ինքնավնասման կամ ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով ստացած վնասների, ինչպես նաև գիտակցության կորստի կամ մահվան դեպքում Ապահովագրողին տրամադրել պատահարի կապակցությամբ Ոստիկանության, նախաքննական մարմնի կամ դատարանի կողմից կայացված վերջնական որոշման օրինակը:.

զ) սույն Պայմանների 10.1. կետի ե) ենթակետում թվարկվածներից տարբերվող վնասվածքներ ստանալու դեպքում՝ Ոստիկանություն դիմելու փաստը հավաստող և/կամ դրա հիման վրա Ոստիկանության կողմից կայացված համապատասխան որոշման (տեղեկանքի) օրինակը, եթե այդպիսին պահանջի Ապահովագրողը,



է) արտադրությունում դժբախտ պատահարի մասին ակտ (անհրաժեշտության դեպքում, երբ պետք է սահմանվի պատահարի կապն Ապահովագրված անձի կողմից աշխատանքային պարտականությունների կատարման հետ),

ը) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված և/կամ Ապահովագրողի կողմից պահանջվող այլ փաստաթղթեր և տեղեկություններ:

10.2. Ապահովագրված անձին մարմնական վնասվածք պատճառվելու դեպքում Ապահովագրողին ներկայացվում են՝

ա) սույն Պայմանների 10.1. կետում նշված փաստաթղթերը,

բ) Բժշկական փաստաթղթեր.

- Ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն ստանալու դեպքում՝ բժշկական փաստաթուղթ, որը պետք է լրացված լինի բժշկի կամ բժշկական հաստատության ձևաթղթի վրա և ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և որտեղ պետք է նշված լինեն Ապահովագրված անձի անունը, ազգանունը, դիմելու ամսաթիվը, կատարված և/կամ նշանակված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները, նախնական ախտորոշումը, վերջնական ախտորոշումը, նշանակված բուժումը (դեղերի ցանկը, ներառյալ՝ դեղերի չափաբաժինը, ընդունման օրերի քանակը), ինչպես նաև կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները,

- Ստացիոնար բուժման դեպքում՝ էպիկրիզ (քաղվածք հիվանդության պատմությունից), որը պետք է ստորագրված լինի բուժող բժշկի կողմից և կնքված լինի բժշկական հաստատության կնիքով և որտեղ պետք է նշված լինեն Ապահովագրված անձի անունը, ազգանունը, դիմելու և դուրսգրման ամսաթիվը, կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունները, վերջնական ախտորոշումը, նշանակված բուժումը (դեղերի ցանկը, ներառյալ՝ դեղերի չափաբաժինն, ընդունման օրերի քանակը), կատարված լաբորատոր և/կամ գործիքային հետազոտությունների պատասխանները,

գ) Ֆինանսական փաստաթղթեր (անհրաժեշտ է ներկայացնել փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերով հատուցում ստանալու համար),

- Դեղորայքի կամ բժշկական պարագաների գնման դեպքում՝ ՀԴՄ (Հսկիչ դրամարկղային մեքենաների) կտրոն և տրամադրված դեղորայքի անվանացանկ կամ հաշիվ-ապրանքագիր,

- ՀԴՄ կտրոն, դրամարկղի մուտքի օրդերի անդորրագիր կամ վճարման փաստը հաստատող այլ փաստաթուղթ: Այն դեպքում, երբ ներկայացված ֆինանսական փաստաթղթերի վրա առկա չի տրամադրված ծառայությունների անվանացանկը, անհրաժեշտ է ներկայացնել տրամադրված ծառայությունների անվանացանկը պարունակող փաստաթուղթ կամ հաշիվ-ապրանքագիր (վերջիններում պետք է նշված լինի մատուցված բժշկական ծառայության տեսակը, սակագինը, վճարված գումարի չափը, վճարման ամսաթիվը, հաստատված լինի Բժշկական հաստատության կնիքով):

10.3. Ապահովագրված անձի մահվան դեպքում Ապահովագրողին ներկայացվում են՝

ա) սույն Պայմանների 10.1., 10.2 կետերում թվարկված փաստաթղթերը,

բ) Ապահովագրված անձի մահվան վկայականի բնօրինակը կամ դրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված պատճենը,

գ) բժշկական փաստաթուղթ կամ դրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված պատճենը, որտեղ նշված է Ապահովագրված անձի մահվան պատճառը (մահվան բժշկական վկայականից քաղվածք, դատաբժշկական եզրակացություն և այլն),

դ) Ժառանգության նկատմամբ իրավունքի վկայագրի բնօրինակը կամ պատճենը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատշաճ վավերացված (ներկայացվում է միայն Ապահովագրված անձի Ժառանգի կամ Ժառանգների կողմից):

10.4. Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգավիճակ) սահմանելու դեպքում Ապահովագրողին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) սույն Պայմանների 10.1., 10.2. կետերում թվարկված փաստաթղթերը,



բ) հաշմանդամության խմբի (կարգավիճակի) վերաբերյալ բժշկասոցիալական փորձաքննության կամ հանձնաժողովի եզրակացությունը:

10.5. Ապահովագրված անձի ժամանակավոր անաշխատունակության դեպքում Ապահովագրողին են ներկայացվում հետևյալ փաստաթղթերը՝

ա) սույն Պայմանների 10.1., 10.2. կետերում թվարկված փաստաթղթերը,

բ) անաշխատունակության թերթիկ բուժհիմնարկից, որտեղ անց է կացվել բուժումը, սահմանված ձևի ամբուլատոր կամ ստացիոնար բուժման վերաբերյալ տեղեկանք, որը պարունակում է տեղեկություններ Ապահովագրված անձի լրիվ ախտորոշման, բուժման ժամկետների, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների մասին:

10.6. Բժշկական հաստատություններից կամ իրավասու մարմիններից ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացված լինեն համապատասխան ձևաթղթի վրա և վավերացված լինեն ստորագրությամբ և համապատասխան կնիքով, իսկ եթե փաստաթուղթը կազմված չէ ձևաթղթի վրա, անհրաժեշտ է փաստաթուղթը տրամադրած հաստատության իրավասու մարմնի ստորագրության և հաստատության կնիքի առկայությունը:

10.7. Այն դեպքում, երբ Ապահովագրողին ներկայացված փաստաթղթերը չեն տալիս ապահովագրական հատուցման մասին որոշում ընդունելու հնարավորություն, Ապահովագրողն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, որոնք անհրաժեշտ են վերջնական որոշում ընդունելու համար, ինչպես նաև անցկացնել ներկայացված փաստաթղթերի փորձաքննություն, ինքնուրույն պարզել ապահովագրական պատահարի առաջացման պատճառները և հանգամանքները:

10.8. Ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունն ապահովագրական պատահար ճանաչելու վերաբերյալ որոշում ընդունելու դեպքում ապահովագրական հատուցումը կարող է իրականացվել՝

ա) Ապահովագրված անձին,

բ) Շահառուին,

գ) Ապահովագրված անձի ժառանգներին հետևյալ դեպքերում՝

- եթե Ապահովագրված անձը մահացել է՝ չստանալով 4.1.1., 4.1.2., 4.1.3., 4.1.5. ենթակետերի համաձայն նրան հասանելիք ապահովագրական հատուցումը՝ այդ հատուցման և արդեն իսկ վճարված գումարների տարբերության չափով,
- եթե Շահառուն դիտավորյալ գրկել է Ապահովագրված անձին կյանքից կամ դիտավորյալ պատճառել է նրան մարմնական վնասվածքներ, որոնք առաջացրել են նրա մահը,
- եթե Շահառուն նշված չի եղել կամ Շահառուն մահացել է Ապահովագրված անձից առաջ,
- եթե նախքան ապահովագրական հատուցման մասին որոշումն ընդունելը տեղի է ունեցել Ապահովագրված անձի և Շահառուի մահը:

դ) Շահառուի ժառանգներին՝ եթե Ապահովագրված անձի մահվանից հետո տեղի է ունեցել Շահառուի մահը և նա չի հասցրել ստանալ նրան հասանելիք ապահովագրական հատուցումը՝ այդ հատուցման և արդեն իսկ վճարված գումարների տարբերության չափով:

10.9. Սույն Պայմանների 4.1. ենթակետով նախատեսված իրադարձությունների առաջացման դեպքում ապահովագրական հատուցման չափը սահմանվում է համաձայն հետևյալ եղանակներից մեկի, որը նախատեսվում է տվյալ Պայմանագրով/Վկայագրով՝

ա) ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսների կիրառում: Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու դիմաց ապահովագրական հատուցման առավելագույն չափ:

բ) փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցում (բացառությամբ՝ պահպանողական և վերականգնողական բուժման գծով ծախսերի): Պայմանագրով/Վկայագրով կարող է նախատեսվել Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու հետևանքով փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի (այդ թվում՝ առաջնային վիրաբուժական մշակում,



հողախախտի շտկում, կոտրվածքի համադրում, դրանց կապակցությամբ լաբորատոր գործիքային քննություններ, փաստաթղթորեն հիմնավորված բուժտրանսպորտային ծախսերի, այդ թվում մոտակա բժշկի մոտ կամ Բժշկական հաստատություն շտապ օգնության մեքենայով փոխադրման ծախսերի հատուցում:

10.10. Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսների կիրառմամբ հատուցման չափ սահմանելու եղանակ ընտրված լինելու դեպքում Ապահովագրված անձին ապահովագրական հատուցումն իրականացվում է ապահովագրական գումարից հետևյալ չափերով՝

ա) 4.1.1. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու դեպքում՝ Պայմանագրին/Վկայագրին կից ներկայացված Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակում նշված չափով:

բ) 4.1.2., 4.1.3. և 4.1.5. ենթակետերում նշված իրադարձության տեղի ունենալու դեպքում՝

- հաշմանդամության 1-ին խումբ, «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ սահմանելու դեպքում՝ 100 (մեկ հարյուր) տոկոս
- հաշմանդամության 2-րդ խումբ սահմանելու դեպքում՝ 70 (յոթանասուն) տոկոս
- հաշմանդամության 3-րդ խումբ սահմանելու դեպքում՝ 40 (քառասուն) տոկոս
- մահվան դեպքում՝ 100 (մեկ հարյուր) տոկոս:

գ) 4.1.4. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու դեպքում՝ առավելագույնն 90 (իննսուն) օր տևողությամբ բուժման յուրաքանչյուր օրվա համար ապահովագրական գումարի 0,4 տոկոսի չափով, սակայն ոչ ավել, քան օրական 5,000 (հինգ հազար) ՀՀ դրամ մինչև 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամ ապահովագրական գումարի դեպքում և ոչ ավել, քան օրական 10,000 (տասը հազար) ՀՀ դրամ 5,000,000 (հինգ միլիոն) ՀՀ դրամը գերազանցող ապահովագրական գումարի դեպքում, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

10.11. Պայմանագրով/Վկայագրով փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերի հատուցման եղանակ ընտրված լինելու և 4.1.1. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու դեպքում ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի փաստացի կրած առաջնային բուժման ծախսերի չափով՝ համաձայն սույն Պայմանների:

10.12. Անկախ Պայմանագրով/Վկայագրով հատուցման չափ սահմանելու եղանակից՝ 4.1.1. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու դեպքում Ապահովագրված անձի գծով ապահովագրական հատուցումն իրականացվում է միայն այն դեպքում, երբ ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձությունը նշված է Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակում:

10.13. Կողմերի համաձայնությամբ Պայմանագրով/Վկայագրով կարող են սահմանվել հատուցման այլ չափեր, սկզբունքներ:

10.14. Պայմանագրով/Վկայագրով 4.3. կետով նախատեսված ձևով այլ ապահովագրական պատահարներ սահմանվելու դեպքում սահմանվում է Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակից տարբեր հատուցումների աղյուսակ, որտեղ նշվում են ապահովագրական գումարի նկատմամբ տոկոսները՝ յուրաքանչյուր պատահարի գծով հատուցման չափը որոշելու համար:

10.15. Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգավիճակ) սահմանելու կապակցությամբ ապահովագրական հատուցումն իրականացվում է՝

ա) մասհանելով նախկինում կատարված հատուցման գումարները, եթե դրանք տրամադրվել են Ապահովագրված անձի առողջությանը վնաս պատճառելու կապակցությամբ (սույն Պայմանների 4.1.1. ենթակետ), որը հանդիսացել է հաշմանդամության պատճառ (պատճառներից մեկը)՝ պայմանով, որ ապահովագրական գումարը ընդհանուր է բոլոր ռիսկերի համար.

բ) անկախ այլ ռիսկերով նախատեսված ապահովագրական պատահարների գծով նախկինում կատարված հատուցումների գումարից, եթե ապահովագրական գումարները սահմանված են եղել յուրաքանչյուր ռիսկի համար առանձին:



10.16. Այն դեպքում, երբ սահմանված է եղել ընդհանուր ապահովագրական գումար բոլոր ռիսկերի համար, սույն Պայմանների 4.1.1. ենթակետով նախատեսված իրադարձության գծով և այդ իրադարձության գծով Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգավիճակ) սահմանելու համար ապահովագրական հատուցումների ընդհանուր չափը չի կարող գերազանցել համապատասխան խմբի (կարգավիճակի) հաշմանդամություն սահմանելու դեպքի համար նախատեսված ապահովագրական գումարը:

10.17. Եթե Ապահովագրված անձին հաշմանդամության խումբ (կարգավիճակ) սահմանելու կապակցությամբ վճարվել էր ապահովագրական գումարի մի մասը կամ հատուցվել էին փաստացի կատարված առաջնային բժշկական ծախսերը կամ իրականացվել էր ապահովագրական հատուցում՝ համաձայն Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակի և Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում վերաքննությունից հետո հաշմանդամության խումբը փոխվել է մեկ այլ խմբի կամ առաջնային բժշկական ծախսերի հատուցումից կամ Ապահովագրական հատուցումների չափերի աղյուսակի համաձայն իրականացված հատուցումից հետո Ապահովագրված անձին սահմանվել է հաշմանդամության խումբ (կարգավիճակ), լրացուցիչ հատուցումն իրականացվում է ապահովագրական գումարի համապատասխան չափի և նախկինում կատարված հատուցման չափի տարբերության չափով:

10.18. Ապահովագրված անձի մահվան կապակցությամբ ապահովագրական հատուցումը կատարվում է ապահովագրական գումարի 100 տոկոսի չափով՝ նվազեցնելով 4.1.1., 4.1.2., 4.1.3., 4.1.5. ենթակետերով նախատեսված ապահովագրական պատահարների գծով հատուցումները, եթե սահմանված էր ընդհանուր ապահովագրական գումար բոլոր ռիսկերի համար:

10.19. Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցումների ընդհանուր չափը սովորաբար Ապահովագրված անձի գծով չի կարող գերազանցել նրա համար սահմանված ընդհանուր ապահովագրական գումարի չափը:

10.20. Եթե ապահովագրական գումարները սահմանված են եղել Պայմանագրում/Վկայագրում ներառված յուրաքանչյուր ռիսկի համար առանձին, իսկ Ապահովագրված անձի մահը տեղի է ունեցել նախքան սույն Պայմանների 4.1.1. ենթակետով նախատեսված իրադարձության պահից 48 (քառասունութ) ժամ լրանալը, ապահովագրական հատուցումը կատարվում է միայն մահվան ռիսկի համար նախատեսված չափով:

10.21. Եթե Պայմանագրում/Վկայագրում Ապահովագրված անձի գծով ներառված են մեկից ավելի ապահովագրական ռիսկեր, սովորաբար ապահովագրական պատահարի գծով ապահովագրական հատուցման չափը չի կարող գերազանցել այդ ապահովագրական ռիսկերի գծով սահմանված ապահովագրական գումարներից առավելագույն մեծությունն ունեցող գումարի 100 տոկոսը:

10.22. Եթե Պայմանագրի/Վկայագրի կնքելիս ապահովագրական գումարներն Ապահովագրված անձի գծով սահմանված են Պայմանագրում/Վկայագրում ներառված յուրաքանչյուր ռիսկի համար առանձին, սովորաբար ռիսկով նախատեսված ապահովագրական պատահարների գծով ապահովագրական հատուցումները, անկախ դրանց քանակից, չեն կարող գերազանցել այդ ռիսկի համար սահմանված ապահովագրական գումարի 100 տոկոսը:

10.23. Ապահովագրական հատուցումն իրականացվում է Պայմանագրով/Վկայագրով այն ստանալու իրավունք ունեցող անձին:

10.24. Այն դեպքում, երբ սովորաբար Ապահովագրված անձի գծով առկա են Ապահովագրողի հետ կնքված միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող մեկից ավելի ապահովագրության պայմանագրեր, որոնց գործողության ժամկետներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են և այդ պայմանագրերով ապահովագրական պատահար տեղի ունենալու պարագայում նախատեսված է.

10.24.1. ամրագրված դրամական հատուցման վճարում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի ընտրությամբ այդ պայմանագրերից մեկով: Ընդ որում՝ ապահովագրական հատուցումն իրականացվում է, եթե անգամ այլ ընկերություններում



Ապահովագրված անձի գծով առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագրեր,

10.24.2. բժշկական ծախսերի հատուցում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի ընտրությամբ այդ պայմանագրերից մեկով: Ընդ որում՝ եթե Ապահովագրված անձի գծով առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող և բժշկական ծախսերի հատուցման վճարում նախատեսող ապահովագրության պայմանագրեր այլ ապահովագրական ընկերություններում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի և Ապահովագրված անձի գծով կնքված բոլոր պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

10.25. Եթե Ապահովագրված անձի գծով առկա են Ապահովագրողի հետ կնքված միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող և ամրագրված դրամական հատուցման վճարում նախատեսող մեկ և ավելի ապահովագրության պայմանագրեր, ինչպես նաև բժշկական ծախսերի հատուցում նախատեսող մեկ և ավելի ապահովագրության պայմանագրեր և դրանց գործողության ժամկետներն ամբողջությամբ կամ մասամբ համընկնում են, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Ապահովագրված անձի ընտրությամբ մեկ ամրագրված դրամական հատուցման վճարում նախատեսող պայմանագրով և մեկ բժշկական ծախսերի հատուցում նախատեսող պայմանագրով: Ընդ որում՝ ամրագրված դրամական հատուցման վճարում նախատեսող պայմանագրով ապահովագրական հատուցումն իրականացվում է, եթե անգամ այլ ընկերություններում առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող ապահովագրության պայմանագրեր: Իսկ եթե Ապահովագրված անձի գծով առկա են միևնույն ապահովագրական ռիսկը ծածկող և բժշկական ծախսերի հատուցման վճարում նախատեսող ապահովագրության պայմանագրեր այլ ապահովագրական ընկերություններում, ապա ապահովագրական հատուցումն իրականացվում է Պայմանագրի/Վկայագրի գծով ապահովագրական գումարի և Ապահովագրված անձի գծով կնքված բոլոր պայմանագրերով նախատեսված ընդհանուր ապահովագրական գումարի հարաբերությանը համամասնորեն:

10.26. Ֆիզիկական անձ Ապահովադիրն իրավունք չունի պահանջել ապահովագրական հատուցում մտածելու ժամանակի ընթացքում տեղի ունեցած ապահովագրական պատահարի համար, եթե այդ մասին նա չի ծանուցել Ապահովագրողին և եթե այդ պատահարը տեղի ունենալուց հետո ֆիզիկական անձ Ապահովադիրը, մինչև մտածելու ժամանակի ավարտը, ծանուցել է Ապահովագրողին Պայմանագիրը/Վկայագիրը լուծելու մասին:

11. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԵՐԺՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

11.1. Ապահովագրողն ազատվում է ապահովագրական հատուցում վճարելու պարտավորությունից այն դեպքում, երբ սույն Պայմանների 4-րդ կետում թվարկված իրադարձություններն առաջացել են՝

11.1.1. 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից դիտավորությամբ հանցագործություն կատարելու ժամանակ կամ հանցագործություն կատարելուց անմիջապես հետո և ունեն պատճառահետևանքային կապ տվյալ հանցագործության հետ,

11.1.2. 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից իրեն դիտավորությամբ մարմնական վնասներ հասցնելու արդյունքում,

11.1.3. Ապահովագրված անձի կողմից ավտոմոբիլն առանց տվյալ կարգի վարորդական իրավունքի շահագործելիս ՃՏՊ-ի անմիջական պատճառ հանդիսացած ՃԵԿ-ի և/կամ ՃԵԱԱՄ օրենքի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով,



11.1.4. Ապահովագրված անձի կողմից տվյալ կարգի վարորդական իրավունք չունեցող անձին փոխանցած ավտոմոբիլը վերջինիս կողմից շահագործելիս ՃՏՊ-ի անմիջական պատճառ հանդիսացած ՃԵԿ-ի և/կամ ՃԵԱԱՄ օրենքի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով,

11.1.5. Ապահովագրված անձի կողմից ավտոմոբիլը ոչ սթափ վիճակում (այդ թվում՝ տոքսիկ նյութերի ազդեցության տակ) շահագործելիս ՃՏՊ-ի անմիջական պատճառ հանդիսացած ՃԵԿ-ի և/կամ ՃԵԱԱՄ օրենքի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինների կողմից հիմնավորվել է այդպիսի նյութերի բռնի ներարկման, սխալմամբ կամ ստիպողաբար օգտագործման փաստը,

11.1.6. Ապահովագրված անձի կողմից ոչ սթափ վիճակում գտնվող անձին փոխանցած ավտոմոբիլը վերջինիս կողմից ոչ սթափ վիճակում շահագործելիս ՃՏՊ-ի անմիջական պատճառ հանդիսացած ՃԵԿ-ի և/կամ ՃԵԱԱՄ օրենքի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու մարմինների կողմից հիմնավորվել է այդպիսի նյութերի բռնի ներարկման, սխալմամբ կամ ստիպողաբար օգտագործման փաստը,

11.1.7. Ապահովագրված անձի վարած տրանսպորտային միջոցի համար լուսացույցի կարմիր արգելող ազդանշանի պայմաններում երթևեկելու, ՏՄ-ի արգելված վայրերում հետադարձ, հետընթաց կամ շրջադարձ կատարելու, թույլատրելի արագությունը 50 տոկոս և ավելի չափով գերազանցելու հետևանքով տեղի ունեցած ՃՏՊ-ի արդյունքում, բացառությամբ, եթե նշված գործողությունները կատարվել են իրավասու մարմինների ցուցումների համաձայն,

11.1.8. Ապահովագրված անձի վարած ՏՄ-ով հանդիպակաց ուղեմասով, որտեղ արգելված է երթևեկությունը, երթևեկելու և ՃՏՊ-ի անմիջական պատճառ հանդիսացած ՃԵԿ-ի և/կամ ՃԵԱԱՄ օրենքի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ վերջինս փորձել է խուսափել առավել վտանգավոր կամ ավելի մեծ վնաս պատճառելուց, ինչը հաստատվել է ՃՌ-ի եզրակացությամբ կամ պետական այլ լիազոր մարմնի ակտով, կամ եթե այդպիսի ցուցում ստացել է իրավասու մարմինների կողմից,

11.1.9. Ապահովագրված անձի կողմից վարվող ավտոմոբիլի ընթացքի ժամանակ ծխելու, բջջային հեռախոս, ռադիոկապ օգտագործելու և ՃՏՊ-ի անմիջական պատճառ հանդիսացած ՃԵԿ-ի և/կամ ՃԵԱԱՄ օրենքի պահանջներին հակասող գործողություններ թույլ տալու հետևանքով,

11.1.10. 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի ինքնասպանության (ինքնասպանության փորձի) արդյունքում, բացառությամբ այն դեպքերի, երբ նա հասցվել էր նման վիճակի երրորդ անձանց անօրինական գործողությունների արդյունքում,

11.1.11. 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի հետ ոչ սթափ վիճակում (այդ թվում՝ տոքսիկ նյութերի ազդեցության տակ) տեղի ունեցած այնպիսի դժբախտ պատահարի արդյունքում, որի վրա հասնելուն նպաստել են Ապահովագրված անձի գործողությունները կամ անգործությունը,

11.1.12. Ապահովագրված անձի հետ ազատագրկման վայրում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով,

11.1.13. 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կողմից ալկոհոլի (ալկոհոլ պարունակող նյութերի), ինչպես նաև առանց բժշկի նշանակման (կամ բժշկի նշանակմամբ, սակայն նրա կողմից նշված դեղաքանակի խախտմամբ) թմրանյութերի, տոքսիկ և հոգեմետ նյութերի օգտագործման արդյունքում թմրանյութային կամ տոքսիկ հարբեցման և/կամ թունավորման արդյունքում, եթե իրավասու մարմինների կողմից չի հիմնավորվել դրանց բռնի ներարկման կամ սխալմամբ օգտագործման փաստը,

11.1.14. Ապահովագրված անձի կողմից սպորտի վտանգավոր տեսակներով (ավտո- և մոտոսպորտ, օդային սպորտ, ձիասպորտի ցանկացած տեսակներ, մարտարվեստի տեսակներ, ալպինիզմ, լեռնային և ջրային զբոսաշրջություն, ստորջրյա նավարկություն, հրաձգային սպորտ և այլն) զբաղվելու կամ



գիտակցաբար իրեն բացառիկ վտանգի ենթարկման արդյունքում (բացի մարդկային կյանքը փրկելու փորձից), եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ,

11.1.15. դժբախտ պատահարի արդյունքում, որը տեղի է ունեցել հիվանդության կապակցությամբ Ապահովագրված անձի հիվանդանոցային բուժման ժամանակ և տվյալ հիվանդության արդյունք է,

11.1.16. Ապահովագրված անձի մոտ զարգացած հոգեկան հիվանդությամբ պայմանավորված դրսևորումներից բխող գործողությունների արդյունքում,

11.1.17. մինչև Ապահովագրված անձի օգտին կնքված Պայմանագրի/Վկայագրի ուժի մեջ մտնելը Ապահովագրված անձի ստացած մարմնական վնասվածքի, սուր թունավորման, այրվածքի, ինչպես նաև դրանց հետևանքների արդյունքում,

11.1.18. Ապահովագրված անձի կողմից առանց բժշկի նշանակման դեղամիջոցների, բուժման թերապևտիկ կամ օպերատիվ մեթոդների իր նկատմամբ կիրառման հետևանքով,

11.1.19. Ապահովագրված անձի ՁԻԱՀ-ով հիվանդանալու հետևանքով,

11.1.20. Ապահովագրված անձի կողմից զինվորական ծառայություն անցնելու ընթացքում,

11.1.21. 14 տարեկան և բարձր տարիք ունեցող Ապահովագրված անձի կամ Շահառուի (Ապահովագրված անձի ժառանգի) կողմից ապահովագրական պատահարի առաջացմանն ուղղված դիտավորյալ գործողությունների հետևանքով,

11.1.22. ռազմական գործողությունների, զորաշարժերի կամ այլ ռազմական միջոցառումների, դիվերսիայի ժամանակ,

11.1.23. քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, ահաբեկչական գործողությունների ժամանակ,

11.1.24. միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակման ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետևանքով,

11.1.25. Պայմանագրով/Վկայագրով նախատեսված այլ հանգամանքների արդյունքում:

11.2. Ապահովագրողն իրավունք ունի մերժել ապահովագրական հատուցման վճարումը, եթե՝

11.2.1. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պատահարի մասին չի հայտնել Ապահովագրողին պատահարը տեղի ունենալուց հետո 48 (քառասունութ) ժամվա ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) եղել է անգիտակից վիճակում կամ այնպիսի իրավիճակում, որն անհնարին է դարձնում Ապահովագրողին պատահարի մասին տեղեկացնելը: Այս դեպքում նա պարտավոր է դա անել անհնարին դարձնող հանգամանքների վերացումից անմիջապես հետո: Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) կրում է ապահովագրական հատուցում ստանալու համար սահմանված ժամկետում դիմելու անհնարինության ապացուցման պարտականությունը,

11.2.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) տեղի ունեցած պատահարի մասին չի հայտնել համապատասխան իրավասու մարմիններին (բժշկական հաստատություն, Ոստիկանություն և այլն),

11.2.3. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) չի ներկայացրել համապատասխան փաստաթղթեր և տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են դժբախտ պատահարի պատճառը, բնույթը և առաջացած արդյունքի հետ կապը սահմանելու համար, կամ Պայմանագրով/Վկայագրով ապահովագրական հատուցում ստանալու նպատակով ներկայացրել է խարդախության հատկանիշներ պարունակող հայտ և/կամ ապահովագրական հատուցման չափը ուռճացվել է և/կամ դեպքը որպես ապահովագրական պատահարի նշաններ ունեցող իրադարձություն ներկայացնելու նպատակով կատարվել է կեղծ հայտարարություն,

11.2.4. Ապահովագրված անձը ապահովագրական պատահարից անմիջապես հետո հրաժարվել կամ որևէ կերպ խուսափել է Ապահովագրողի (Ապահովագրողի ներկայացուցչի) կամ իրավասու պետական մարմնի պահանջով, օրենքով սահմանված կարգին համապատասխան, սթափության վիճակի գնություն անցնելուց,



11.2.5. Ապահովագրական պատահարի կապակցությամբ քրեական գործ չի հարուցվել և քրեական հետապնդում չի իրականացվել, իսկ հարուցված քրեական գործով վարույթը կարճվել է ապահովագրված անձի բողոքի բացակայության հիմքով,

11.2.6. Ապահովադիրը կամ Ապահովագրված անձը կամ Շահառուն չի կատարել Պայմանագրով և/կամ Պայմանագրով/Վկայագրով նախատեսված իր պարտականությունները:

11.3. Ապահովագրողը չի հատուցում սույն Պայմանագրի 3.2. կետում նշված կատեգորիաներից ցանկացածին պատկանող և/կամ Պայմանագրի/Վկայագրի կնքման պահին տարիքով չհամապատասխանող անձի կյանքին կամ առողջությանը պատճառված վնասները, բացառությամբ այն դեպքի, երբ Ապահովագրված անձը ձեռք է բերել հաշմանդամություն Պայմանագրի/Վկայագրի գործողության ընթացքում:

11.4. Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա չեն.

11.4.1. Ապահովագրված անձի ինֆեկցիոն (վարակիչ) հիվանդությունները, այդ թվում՝ տոքսիկոնիֆեկցիաները՝ անկախ վարակման ուղղուց և տեսակից,

11.4.2. Ապահովագրված անձի միտումնավոր թունավորումը քիմիական նյութերով (միտումնավոր օգտագործման դեպքում՝ անկախ դոզաներից), այդ թվում՝ ալկոհոլով, այլ տոքսիկ և/կամ թմրանյութային նյութերով,

11.4.3. Ապահովագրված անձի սննդային թունավորումը,

11.4.4. Ապահովագրված անձի ալերգիան՝ անկախ այն բանից, թե ինչպես է այն արտահայտվում,

11.4.5. Ապահովագրված անձի մաշկի մակերեսային վնասումները (մաշկի արտաքին շերտերի վնասումները), այդ թվում՝ ճանկավածքները և քերծվածքները, եթե Պայմանագրով/Վկայագրով այլ բան նախատեսված չէ:

11.5. Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա չեն բժշկական պարագաների և հարմարանքների (լսողական սարքեր, պրոթեզներ, իմպլանտներ, հաշմանդամային սայլակներ, մետաղական կոնստրուկցիաներ, օրթոպեդիկ սարքեր և հարմարանքներ, կորսետներ և այլն) գծով ծախսերը, պահպանողական և վերականգնողական բուժման գծով ծախսերը:

11.6. Պայմանագրով/Վկայագրով հատուցման ենթակա չեն սույն Պայմանագրի 4.1.1. ենթակետում նշված իրադարձության տեղի ունենալու հետևանքով առաջացած հիվանդությունների (այդ թվում՝ քրոնիկ հիվանդությունների) գծով ծախսերը:

11.7. Սույն ապահովագրությունը չի ծածկում այն կորուստը/ոչնչացումը և/կամ վնասը, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատճառվել է որևէ անձի կողմից ձեռնարկված գործողության արդյունքում, որը գործում է դե յուրե կամ դե ֆակտո իշխանության բռնազավթման գործողություններ կատարող կամ դրան նպաստող ահաբեկչություն կամ բռնություն նախաձեռնած կազմակերպության անունից կամ դրա հետ միասին:

11.8. Սույն Պայմանագրի 11-րդ գլխում նշված արարքները (գործողությունները, իրադարձությունները) սահմանվում (ճանաչվում) են այդպիսին դատարանի օրինական ուժի մեջ մտած որոշման, վճռի, դատավճռի, դատախազության որոշման, բժշկական, իրավապահ և այլ իրավասու մարմինների կողմից տրամադրված այլ փաստաթղթերի հիման վրա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. ՎՆԱՄԻ ՀԱՏՈՑՄԱՆ ՊԱՀԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆ ԱՊԱՀՈՎԱԴԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻՆ ԱՆՑՆԵԼԸ (ՍՈՒԲՐՈԳՍՅՄ)

12.1. Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) պահանջի իրավունքը, որը նա ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձի նկատմամբ, անցնում է ապահովագրական հատուցումն իրականացրած Ապահովագրողին՝ վերջինիս կողմից հատուցված գումարի սահմաններում:



12.2. Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) պարտավոր է հնարավորության դեպքում, վնաս պատճառելու համար պատասխանատու անձանց ներկայացնել պատշաճ կերպով ձևակերպված պահանջ և Ապահովագրողին փոխանցել մեղավոր անձանց նկատմամբ պահանջի իրավունքն իրականացնելու համար բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

12.3. Եթե Ապահովադիրը (Ապահովագրված անձը, Շահառուն) հրաժարվել է Ապահովագրողի կողմից հատուցված վնասների համար պատասխանատու անձի նկատմամբ իր պահանջի իրավունքից կամ այդ իրավունքն իրականացնելն անհնարին է դարձել Ապահովադիրի (Ապահովագրված անձի, Շահառուի) մեղքով, Ապահովագրողը լրիվ կամ համապատասխան մասով ազատվում է ապահովագրական հատուցում վճարելուց և իրավունք ունի պահանջելու ապահովագրական հատուցման ավել վճարված գումարի վերադարձ:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Սույն Պայմանների համաձայն կնքված Պայմանագրից/Վկայագրից բխող վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով:

13.2. Բանակցությունների արդյունքում համաձայնության չգալու դեպքում վեճերը լուծվում են Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքի համաձայն կամ դատական կարգով՝ ՀՀ օրենսդրության համաձայն:

13.3. Կողմերի միջև ծագած վիճելի հարցերը լուծելու դեպքում՝ Պայմանագրի/Վկայագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների և Ծրագրի նկատմամբ:

13.4. Վիճելի հարցեր լուծելու դեպքում Ծրագրի դրույթները գերակայող ուժ ունեն սույն Պայմանների նկատմամբ:

13.5. Վիճելի հարցեր լուծելու դեպքում, եթե սույն Պայմաններով Ծրագրի դրույթների վերաբերյալ նախատեսված է առավել մանրամասն նկարագրություն, ապա կիրառվում են սույն Պայմանների և Ծրագրի դրույթները միաժամանակ:

14. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ ՄԱԺՈՐ)

14.1. Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում սույն Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար, եթե դա հանդիսացել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանք, մասնավորապես՝ ջրհեղեղի, հրդեհի, երկրաշարժի և այլ տարերային աղետների, ռազմական գործողությունների, քաղաքացիական պատերազմի, ցանկացած տիպի ժողովրդական հուզումների, գործադուլների, տնտեսական շրջափակման, ինչպես նաև կառավարության կողմից սահմանված այլ սահմանափակումների և արգելքների:

14.2. Սյն դեպքում, երբ 14.1. կետում նշված հանգամանքներից մեկն անմիջականորեն ազդել է պարտականությունը Պայմանագրով/Վկայագրով սահմանված ժամկետում կատարելու վրա, դրա կատարումը հետաձգվում է այդ հանգամանքների ազդեցության ժամկետով: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 30 (երեսուն) օրից ավելի, կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն լուծել Պայմանագիրը/Վկայագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին, և այդ դեպքում կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի կրում հնարավոր վնասների փոխհատուցման համար:

14.3. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը Պայմանագրից/Վկայագրից բխող պարտականությունների կատարման վրա պարտավոր է ապացուցել այն կողմը, որի պարտականությունների կատարմանը խոչընդոտում է նման ազդեցությունը: